

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակի և դրանով զբաղեցված հողամասի բաց աճուրդ դասական եղանակով:
 Աճուրդը տեղի կունենա 2021թ. մարտի 2-ին՝ ժամը 11:00-ին, ք.Վանաձոր դասական եղանակով:

Լոտի անվանումը	Գույքի և հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը ք/մ	Գույքի և հողամասի օգտագործման նպատակը	Գույքի և հողամասի նկատմամբ սահմանափակումների ներառյալ սերվիտուտներ ի առկայությունը	Ճանապարհների առկայություն և մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը դրամ
1ա.1	Տիգրան Մեծի պողոտա 54-23/1 ավտոտնակ	06-001-0434-0117-001	30.45 արտաքին մակ 28.2 ներքին մակ	Ավտոտնակի կառուցման համար	չկան	Միջբակային ճանապարհ	Ըստ նախապես համաձայնեցված հողահատկացման փաստաթղթերի	-	226000
1ա.2	Տիգրան Մեծի պողոտա 54-23/1 հողամաս	06-001-0434-0117	30						4524 ք/մ

Աճուրդի մեկնարկային գները սահմանվում են Վանաձոր համայնքի ավագանու որոշման համաձայն:
 Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, և Վանաձորի տեղական զանձապետական բաժանմունքի 900235401453 հաշվարկային հաշվին վճարված 25000 (քսանհինգ հազար) դրամի՝ աճուրդին մասնակցության վճարի մուծման անդորրագիր, իրավաբանական անձինք՝ նաև հիմնադիր և լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև՝ այդ փաստաթղթերի և ղեկավար անձի անձնագրի պատճենները:
 Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք նախավճարը վճարում են տվյալ ավտոտնակի և նրանով զբաղեցրած հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և նրանց տրվում է մասնակցի վկայական: Աճուրդի դրված ավտոտնակի և նրանով զբաղեցրած հողամասի քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և սակարկողը կարող է գինն ավելացնել քայլի չափից ոչ պակաս գումարով:
 Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին մինչև 2021թ. փետրվարի 24-ը ժամը 18:00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Վանաձորի համայնքապետարանի մրցույթների և աճուրդների կազմակերպման ու անցկացման հանձնաժողովին: Հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա 22:
 Հեռ. (0322)4-66-10